

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2017թ. հունվարի 24-ի
ընդլայնված նիստի /արձանագրություն N 9/

1. ԵԹԿՊԻ-ի առաջին կուրսերում 2016-2017 ուս. տարվա I կիսամյակի քննությունների ընթացքի և արդյունքների վերաբերյալ ՈԱԿ –ի ղեկավարի զեկույցն ընդունելի գիտություն,
 - 1.1. հանձնարարել առաջին կուրսերի ղեկավարներին հաշվի առնել զեկույցում նշված թերությունները և առաջիկայում խստիվ առաջնորդվել ամբիոնների կողմից մշակված գնահատման չափանիշներով,
 - 1.2. այսուհետ առաջին կուրսերում մասնագիտական առարկաների քննություններն ընդունել հանձնաժողովով: Յուրաքանչյուր կիսամյակի համար հանձնաժողովների կազմը և աշխատակարգը հաստատել ռեկտորատի նիստով,
 - 1.3. սահմանված ժամկետում քննական տեղեկագիրը ղեկանատ չհանձնելու համար դեր. I կուրսի ղեկավար Նիկոլայ Ծատուրյանին հայտարարել բանավոր զգուշացում:
2. «Էռազմուս +» շարժունության ծրագրին ինստիտուտի մասնակցության նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար,
 - 2.1. ի կատարումն ԱԻ վարչության հանձնարարականի`
 - 2.1.1 հանձնարարել ֆինանսատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Վ. Եղիազարյանին և գլխ. Հաշվապահ Հ. Նալբանդյանին կազմել նախահաշիվ ինստիտուտում կրակմարիչների խմբաքանակ և տեսախցիկներ ձեռք բերելու և տեղադրելու համար,
 - 2.1.2 ինստիտուտի շենքի տարհանման գծագիրը գծելու համար հրավիրել մասնագետ` կնքելով վճարովի ծառայության մատուցման պայմանագիր,
 - 2.2. առաջիկա օրերին խորհրդի անդամներին տրամադրել ինստիտուտի 2017թ. բյուջեյի նախագիծը,
 - 2.3. ս.թ. փետրվարի 9-ից ինստիտուտի վարչակազմի աշխատողների հաճախելիությունը ամրագրել գրանցամատյանում ժ. 9⁰⁰ -9³⁰ և 16³⁰- 17⁰⁰:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան